ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1963-2023 թթ.)*

ՀՏԴ: 027.625(479.25)(091)
DOI: 10.54503/2953-8092.2023.2(2)-112

ԵԼԻԶԱՎԵՏ ԵՐԵՄՅԱՆ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ORCID: 0009-0009-3037-0209

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակչական գործունեությունը բխում է այն նպատակից, որ որդեգրել է գրադարանը 90 տարի շարունակ: Այսօր գրադարանն ունի հարուստ տպագիր ժառանգություն, որը խոսում է ամենօրյա տքնաջան աշխատանքի մասին: Սույն հոդվածի շրջանակում անդրադառնում ենք գրադարանի տպագիր հրատարակությունների թեմատիկ առանձնահատկություններին:

The publishing activities of the Khnko Aper National Children's Library stems from the goal adopted by the library for 90 years. Today, the library has a rich print heritage, which is the result of the daily hard work. This article addresses the thematic features of the library's printed publications.

Բանալի բառեր՝ Խնկո Ապոր անվան մանկական գրադարան, գրադարանի հիմնադրման պատմություն, տպագիր ժառանգություն, գործառույթներ, հրատարակություններ, մատենագիտություն, թվային դարաշրջան:

Ինչպես հղել՝ Երեմյան Ե. (2023), Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1963-2023 թթ.), *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, *2*(2), 112-136. https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-112

* *Հոդվածը ներկայացվել է 01.11.2023, գրախոսվել է 08.12.2023, ընդունվել է տպագրության 22.12.2023:*
The article was submitted on 01.11.2023, reviewed on 08.12.2023, accepted for publication on 22.12.2023.

How to cite (APA style): Eremyan E. (2023), Publications of the Khnko Aper National Children's Library (1963-2023), *Herald of the Armenian Library Association*, *2*(2), 112-136. https://doi.org/10.54503/2953-8092.2023.2(2)-5

Ներածություն

Գրադարանային համակարգում իրենց առանձնահատուկ տեղն ունեն մանկական գրադարանները, որոնց գործառույթները ինքնատիպ են՝ պայմանավորված ընթերցողական լսարանի առանձնահատկություններով:

ՀՀ գրադարանային համակարգում առանձնանում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, որի հիմնադրման 90-ամյակը տոնեցին այս տարի: Ավանդույթներ և ինքնատիպ աշխատելաոճ ունեցող մշակութային օջախը տասնամյակներ շարունակ, ի թիվս այլևայլ գործառույթների, իրականացրել է հրատարակչական աշխատանք, որի արդյունքը տեսանելի դարձավ հիմնադրման 90-ամյակի առթիվ կազմակերպված ցուցադրության ժամանակ:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի գիտական-հրատարակչական գործունեությունը:

Համառոտ պատմական ակնարկ

Երևան քաղաքում է գտնվում հայ մանկական գրքի գլխավոր օջախը՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, որն այս օրերին նշում է իր հիմնադրման 90 ամյակը: Գրադարան, որն իր բազմաբնույթ և բազմաբովանդակ աշխատանքներով բավարարում է ոչ միայն մանուկ ու պատանի ընթերցողների պահանջները, այլև, արդեն շուրջ 60 տարի, ղեկավարում է հանրապետությունում ընթերցանության հետ կապված բազմաթիվ հարցեր ու խնդիրներ:

Գործունեության երկար տարիների ընթացքում գրադարանում կազմվել և հրատարակվել են բազմաթիվ մեթոդա-մատենագիտական նյութեր, որոնք բաշխվել են հանրապետության մանկական ու դպրոցական գրադարաններին, դարձել մասնագիտական նյութերի ներդրման, փորձի փոխանակման աղբյուր, աշխատանքների

կազմակերպման ծրագիր և ուղեցույց: Խնկո Ապոր անվան ազգային գրադարանը բավարարել է ընթերցողների տեղեկատվական պահանջները, նպաստել արտադասարանային ընթերցանության կազմակերպմանը, որի արդյունքում իր գործուն մասնակցությունն է ունեցել հանրապետության մարզերում և քաղաքներում գործող մանկական, մարզային գրադարանների մանկական բաժինների, ինչպես նաև դպրոցական գրադարանների աշխատանքների կազմակերպման գործընթացին: Գրադարանի կողմից հաճախ կազմակերպվող սեմինար պարապմունքները, կոնֆերանսները, այցերը հետևողականորեն նպաստել են գրադարանների հետազոտական, մատենագիտական, մեթոդական աշխատանքների իրականացմանը:

60-ական թվականներին հանրապետությունում ընդարձակվում է գրադարանային ցանցը. բացվում են բազմաթիվ մանկական և դպրոցական գրադարաններ, որոնք իրենց հետ բերում են աշխատանքները համակարգելու խնդիրներ: Եվ ահա այդ գրադարաններին մեթոդական-մատենագիտական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտություն է առաջացանում ունենալ հանրապետական մի գրադարան, որը պիտի ղեկավարեր այդ աշխատանքները: Այս տարիներին գրադարանը մեծ հեղինակություն է ձեռք բերում:

Իր բազմաբնույթ աշխատանքների շնորհիվ 1962 թ. ՀԽՍՀ նախարարների խորհրդի դեկտեմբերի 8-ի թ. 988 որոշմամբ գրադարանը ստանում է հանրապետական կարգ, ըստ կանոնադրության՝ համարվել է ազգային գրապահոց և մեթոդական աշխատանքների կենտրոն երեխաներին սպասարկող գրադարանների համար՝ իր վրա վերցնելով հանրապետության դպրոցական և մանկական գրադարանների մեթոդական-մատենագիտական ղեկավարման աշխատանքները:

Գրադարանի հրատարակությունները

1963 թվականից սկսած Մեթոդ-մատենագիտական միացյալ բաժինը իրականացնում է հրատարակչական աշխատանքներ. կազ-

մում և հրատարակում է բազմաբովանդակ մասնագիտական գրականություն՝ մեթոդական ձեռնարկներ, տեղեկատու-մատենագիտական ցանկեր, մատենագիտություններ, կենսամատենագիտություններ, օրացույցներ՝ նվիրված մանկապատանեկան պարբերական մամուլին, գրողներին, արվեստագետներին, մանկավարժներին:

«Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց»-ի առաջին համարը գրադարանավարների սեղանին դրվեց 1963 թ.: Այն մեքենագիր էր՝ բաղկացած 80 օրինակից: Սկզբնական շրջանում նյութերը մեքենագիր էին՝ 50-60 օրինակ տպաքանակով: 1966 թ. հրատարակվել է թիթեղատիպ՝ 400-500 օրինակով, իսկ 1967 թվականից՝ նյութերը հրատարակվել են տպարանում՝ 1000-1500 օրինակ տպաքանակով:

Գրադարանի մատենագիտական բաժինը 60 տարի շարունակ, առ այսօր, կազմում և հրատարակում է «Հիշարաժան տարեթվեր» մեթոդ-մատենագիտական հանձնարարականը (օրացույցը), որի նպատակն է օգնել գրադարաններին և այլ մանկական կազմակերպություններին՝ համակարգելու իրենց աշխատանքները:

1970-ական թվականներին հանրապետությունում մշակույթի, գրահրատարակչական գործի զարգացմանը զուգընթաց՝ առավել ակտիվացան գրադարանի մեթոդական-մատենագիտական աշխատանքները:

1974 թ. Մեթոդ-մատենագիտական բաժինը տարանջատվեց երկու առանձին բաժիններ:

Հետագա տարիներին գրադարանում իրականցվող մեթոդական, մատենագիտական, գիտահետազոտական, դաստիարակության և զանգվածային միջոցառումների աշխատանքների, սոցիոլոգիական, վիճակագրական վերլուծությունների, գրքային ֆոնդերի ուսումնասիրությունների հիման վրա գիտական հիմքերի վրա դրվեցին երեխաների գրադարանային սպասարկումը, դաստիարակչական ու մեթոդական աշխատանքները: Մշակվեցին և կատարելագործվեցին գիրքը երեխային հասցնելու բազմաթիվ ձևեր և մեթոդ-

ներ: Իր իրականացրած աշխատանքների համար 1982 թ. գրադարանին շնորհվեց գիտական առաջին կարգ:

ՀՀ անկախությունից հետո՝ 1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին, ոչ միայն չդադարեց «Հիշարժան տարեթվեր» օրացույցի կազմումը, այլև համակարգչի և պատճենահանման միջոցով կազմվեցին և հրատարակվեցին ժամանակի պահանջը բավարարող բազմաբնույթ հանձնարարական ցանկեր և այլ նյութեր:

1998-1999 թթ., արդեն տպարանում հրատարակվեցին գրադարանի կողմից կազմված գունազարդ «Ճոճանակ» մանկական ամսագրի երեք համարները: Հետագա տարիներին՝ 2002 թվականից սկսած, գրադարանի կողմից կազմված նյութերը հրատարակվեցին տպարանում:

Գրադարանի կողմից 1986 և 1990 թթ. հրատարակված գունազարդ «Գարնան շողեր»-ը 2002 թ. հրատարակվեց երրորդ անգամ, ուր, ինչպես նախորդ հրատարակություններում, ամփոփվեցին գրադարանի գրական և նկարչական խմբակների սաների բանաստեղծությունները, պատմվածքներն ու նկարները:

Գրադարանի նկարչական խմբակի սաների նկարազարդումներով հրատարակվեցին գունազարդ թերթվող ալբոմ-օրացույցներ՝ «2003 օրացույց» (հայերեն, ռուսերեն, անգլերեն) և «2008 օրացույց» (հայերեն, անգլերեն)՝ նվիրված գրադարանի հիմնադրման 70 և 75-ամյակներին:

2003 թ. ՀՀ կառավարության թ. 886 որոշմամբ գրադարանը վերակազմավորվեց՝ որպես Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան:

2006 թ. հրատարակվեց «Անկախության 15-ամյա ուղին», որը հանրապետության տարբեր մարզերի պատանի ընթերցողների շարադրությունների ժողովածու էր՝ նվիրված Հայաստանի անկախությանը. գրքի ձևավորումը իրականացրել էին Խնկո Ապոր ազգային մանկական գրադարանի նկարչական խմբակի սաները: Ավելի ուշ՝ 2009 թ., գրադարանի աջակցությամբ հրատարակվեց հերոսա-

մարտի 90-ամյակին նվիրված Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոնի երեխաների նկարչական ստեղծագործությունների «Սարդարապատի ղողանջները» խորագրով գիրք-ալբոմը, ուր ներառվեցին հայ ժողովրդի հերոսական պայքարը ներկայացնող 16 պաննոներ:

Հայկական գրատպության 500-ամյակին ընդառաջ՝ 2010 թ. ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ և Հայկական գրատպության 500-ամյակի հոբելյանական հանձնաժողովի հովանու ներքո, ինչպես նաև «Արտբրիջ» գրախանութի, «Հայ գրքի կենտրոն» ՀԿ-ի, «Անտարես հոլդինգը»-ի և Հրատարակիչների ազգային ասոցիացիայի հետ գործակցությամբ, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը կազմակերպեց «Դարձ առ գիրք» խորագրով գրքարվեստի փառատոն՝ միտված գրքի արժևորմանն ու ընթերցանության խթանմանը: Փառատոնը միջմշակութային երկխոսության, փորձի փոխանակման և համագործակցության միջոցով նպաստեց Հայաստանում ժամանակակից գրականության, թարգմանական գործի, գրքի ձևավորման մշակույթի, գրատպության զարգացմանը: Այն նպատակ ուներ հանրությանը վերադարձնել դեպի գիրքն ու ընթերցանությունը: Փառատոնին մասնակցեցին տարբեր երկրների հրատարակիչներ, գրողներ, արվեստագետներ: Ծրագիրը ներառում էր բազմաբնույթ միջոցառումներ:

Գրքի միջազգային երեք հիմնական մասնագիտական ասոցիացիաների ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախընտրական հանձնախմբի կողմից ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում անցկացված նիստի ժամանակ Երևանը հռչակվեց 2012 թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այսպիսով Երևանը դարձավ Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակված 12-րդ քաղաքը: Ընդհանուր միջոցառումների շրջանակում 2012 թ. գրադարանի կողմից կազմվեցին ու հրատարակվեցին մի շարք արժեքավոր գրքեր: Նույն թվականին ՀՀ մշակույթի նախարարության և «Զանգակ» հրատարակչության հետ համատեղ իրականացվեց «Ես գիրք եմ ստեղծում» մանկական գրա-

կան-ոսուցողական միջոցառումը, որի նպատակը գրքի ստեղծման աշխատանքներին մասնակից դարձնելու միջոցով երեխաների ու պատանիների մոտ գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն և սեր ձևավորելն էր: Ծրագրի առաջին փուլում անցկացվեց «Գիրքը, որը փոխեց իմ կյանքը» խորագրով շարադրությունների մրցույթը: Ընթերցումների արդյունքում ընտրված 30 լավագույն աշխատանքներն ամփոփվեցին «Իմ ստեղծած գիրքը» ժողովածուում: Ծրագրի երկրորդ փուլում գիրքը պատկերազարդելու և պատանիների մեջ ընթերցանության նկատմամբ նոր խթաններ առաջացնելու նպատակով հայտարարվեց «Ես գիրք եմ ստեղծում» գրքի ձևավորման մրցույթը, որի արդյունքում ներկայացվեց 200 աշխատանք: Նկարազարդումների և շարադրությունների հեղինակները «Զանգակ» հրատարակչությունում մասնակցեցին գրքի ձևավորման և հրատարակման գործընթացին, ականատես եղան գրքի արարմանը:

Վերոնշյալ աշխատանքները հիմք դարձան՝ 2013 թվականից IBBY-ին՝ Մանկապատանեկան գրքի կոմիտեին անդամակցելու և լիիրավ գործընկեր դառնալու համար: Ստեղծվեց IBBY Հայաստան կոմիտեն, որի հիմնադիրներն են Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն ու «Հրանտ Մաթևոսյան» հիմնադրամը: IBBY-ի անդամակցությունը հեռանկարային հնարավորություն ստեղծեց Հայաստանում IBBY-ի նախագծերի (մանկապատանեկան գրականության զարգացում և ընթերցանության խթանում) իրականացման համար, ինչպես նաև ապահովեց Հայաստանի մասնակցությունը IBBY-ի և նրա ավելի քան 80 անդամ երկրների ծրագրերին ու նախագծերին: Միջազգային այս կառույցին Հայաստանի մասնակցությունը նպաստավոր հիմք ստեղծեց՝ հանրապետությունում մանկական գրականությունը և մանկական գրքի ձևավորման մշակույթը խթանելու ու զարգացնելու համար: 2015 թ. IBBY Հայաստան կոմիտեն իրականացրեց «Պատանին և շրջակա միջավայրը» խորագրով ստեղծագործական մրցույթ-նախագիծը, որի շրջանակում գերմանացի գրող Մանֆրեդ Թայզենը եռօրյա վարպետության դաս անցկաց-

րեց հայ երիտասարդ գրողների համար: Նա հայ պատանիների համար գրեց «Ապակյա Արամը» պատմվածքը, որը թարգմանաբար հրատարակվեց հայերեն: Նույն թվականին նախագծին մասնակից հայ երիտասարդ գրողների «7 գույն» պատմվածքների ժողովածուն և Մ. Թայզենի «Ապակյա Արամը» գրքերը հրատարակվեցին «IBBY Յամանդա» հիմնադրամի «Ընթերցող դառնալու երեխայի իրավունքը» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: 2017 թ. Իտալիայի Բոլոնիա քաղաքում անցկացված մանկապատանեկան գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառում, որին մասնակցում էր ՀՀ մշակույթի նախարարության գլխավորած պատվիրակությունը («Զանգակ-97», «Ակտուալ արվեստ» հրատարակչությունները, «Բուկինիստ» գրախանութը, «GSM» ստուդիան, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը), կայացավ «IBBY Հայաստան» ազգային կոմիտեի հրատարակած «7 գույն» պատմվածքների ժողովածուի անգլերեն տարբերակի (2016 թ.) շնորհանդեսը: Միջոցառման ընթացքում ներկայացվեց գրքի ստեղծման պատմությունը: Մանկապատանկան գրքի միջազգային կոմիտեի (IBBY) և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի համագործակցության արդյունքում՝ իրականացվեց ևս մի հրաշալի և ուսանելի ծրագիր՝ գրադարանավարների վերապատրաստման դասընթացներ, որը վարում էր Լիոնի քաղաքային գրադարանի մանկական բաժնի վարիչ Վիոլին Կանմաչերը: Ծրագրի ավարտից հետո գրադարանավարների համար՝ որպես ուղեցույց, ամփոփվեց և հրատարակվեց «Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը» մեթոդական ձեռնարկը:

2018 թ. մարտի 7-ին գրադարանի հրավերով «Հեքիաթի դեսպաններ» հեղինակային նախագծի հյուրն էր ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը (այժմ՝ ՀՀ վարչապետ), ով գրադարանի փոքրիկ ընթերցողների համար կարդաց իր հեղինակած «Չար տնակի հեքիաթը» ստեղծագործությունը, որը գրվել էր հատուկ գրադարանի ընթերցողների համար և ընթերցվում էր առաջին անգամ: 2018 թ.

գիրքը հրատարակվեց գրադարանի և «IBBY Հայաստան» նախագծի շրջանակում՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի սաների ձևավորմամբ:

2019 թ. գրադարանը և IBBY Հայաստանը ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, «Արևիկ» հրատարակչության և «Արտբրիջ» գրախանութի գործակցությամբ, անցկացրեցին Մանկագիրների և նկարազարդողների մրցույթ, որի նպատակն էր խթանել մանկագրության զարգացումը Հայաստանում: Մանկապատանեկան արձակ անվանակարգում երկրորդ մրցանակին արժանացած Հովիկ Մխիթարյանի և Էդգար Թաթիկյանի ստեղծագործությունները հրատարակվեցին մեկ գրքով:

2019 թ. Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը առանձին տաղավարով մասնակցեց ԱՄԷ-ի Շարժայի միջազգային գրքի ամենամյա տոնավաճառին: Տոնավաճառի շրջանակում իրականացվեց «IBBY Armenia» ՀԿ-ի հետ համագործակցությամբ հրատարակված գրքերի շնորհանդեսը:

Ամփոփում

Գրադարանը շարունակում է իր աշխատանքները նույն ոգով. կազմում և հրատարակում է «Հիշարժան տարեթվեր», «Հայ մանկական գրականության մատենագիտություն» պրակները, կենսամատենագիտություններ, հանձնարարական ցանկեր, մեթոդական նյութեր, ակտիվորեն համագործակցում է Հայաստանում IBBY-ի և այլ միջազգային նախագծերին: Գրադարանն իր հրատարակությունները առկա և առցանց տարբերակներով տրամադրում է ՀՀ մարզերի գրադարաններին՝ նպաստելով մանկապատանեկան գրականության զարգացման և ընթերցանության կազմակերպման աշխատանքներին:

PUBLICATIONS OF THE KHNKO APER NATIONAL CHILDREN'S LIBRARY

ELIZAVET YEREMYAN
Khnko Aper National Children's Library

Keywords: Khnko Aper National Children's Library, History of the Foundation of the Library, Printed Heritage, Operations, Publications, Bibliography, Digital Age.

The library continues its work in the same spirit: compiles and publishes "Memorable Dates", "Bibliography of Armenian Children's Literature" books, bio-bibliographies, instruction lists, methodological materials, actively cooperates with IBBY and other international projects in Armenia. The library provides its publications in existing and online versions to the libraries of RA regions, contributing to the development of children's literature and the organization of reading.

ՀԱՎԵԼՎԱԾ
Ցանկ Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի տպագրած գրքերի

1965

1. Մելյան Բալաբեկ: Երբ սիրում են գործը (Ստեփանավանի շրջանային մանկական գրադարանի աշխատանքային փորձը):

2. Քաղաքային, շրջանային մանկական գրադարանների աշխատողների սեմինար պարապմունքների թեմատիկան:

1966

3. Աշխատանքը մանուկների հետ գյուղական գրադարաններում: Գործնական ձեռնարկ: Գլուխ 2. Մանուկների ընթերցանության ղեկավարումը /Կազմ.՝ Տ. Լ. Սադոֆևա; Փոխադրեց՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբ.՝ Հ. Հ. Սիլվանյան:

4. Մանուկ ընթերցողներին՝ ՍՄԿԿ 23-րդ համագումարի մասին: Մեթոդական օգնություն մանուկներին սպասարկող գրադարաններին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա.Գ. Հակոբյան:

5. Նշանավոր և հիշարժան տարեթվերի օրացույց (յուրաքանչյուր տարի առ այսօր):

1967

6. Ինչ կարդալ Վ.Ի. Լենինի մասին: 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխլյան, Ժ. Ստեփանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

7. Ինչ կարդալ քաղաքացիական կռիվների մասին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխլյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

8. Խնկո-Ապերը մանուկներին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

9. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Ինչ կարդալ (ՍՍՀՄ ժողովուրդների մանկական գրականությունից: 2-8-րդ դասարաններիրի համար) /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

10. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Ինչ կարդալ (8-10-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ա. Ամիրյան:

11. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Հայաստանը նոր հնգամյակում:

12. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Պատանի քիմիկոսին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար):

13. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: Քեզ համար պատանի ֆիզիկոս: Հանձնարարական գրականության ցանկ:

14. Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին և Վ. Ի. Լենինի 100-ամյակին: Հանձնարարական գրականության ցանկ:

15. Հովհաննես Թումանյանը մանուկներին /Կազմ.՝ Է. Երիցյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

16. Ճանաչիր քո հայրենիքը և արտադրության առաջավորներին: Հանձնարարական գրականության ցանկ 8-10-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Մխլյան:

17. Շրջանային, քաղաքային մանկական գրադարանների տարեկան պլանի սխեման /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

18. Վ. Ի. Լենինի անվան պիոներական կազմակերպության 45-ամյակը: Մեթոդական նամակ:

1968

19. Գիտա-հանրամատչելի գրականության պրոպագանդան մանկական գրադարանում: (Մեթոդական նամակ) / Կազմ.՝ Ա. Ամիրյան:

20. Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Բանաստեղծությունների հանձնարարական ցանկ /Կազմ.՝ Է. Երիցյան:

21. Ընթերցանության ղեկավարման մասին: (Մեթոդա-հրահանգչական նամակ գրադարանավարի համար) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

22. Ինչ կարդալ կոմերիտմիության մասին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 6-10-րդ դասարանների համար ՀամԼԿԵՄ 50-ամյակի առթիվ:

23. Խաժակ Գյուլնազարյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

24. Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1968 թթ.) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Ս. Ամիրյան:

25. Հայրապետ Հայրապետյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական և կրտսեր տարիքի սովորողների համար /Կազմ.՝ Ա. Նիկոլաևա:

26. Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ: Ինչ կարդալ գիտա-ֆանտաստիկ և արկածային գրականությունից /Կազմ.՝ Լ. Վ. Գևորգյան:

27. Հուշագրություններ: Հանձնարարական գրականության ցանկ 7-10-րդ դասարաններում սովորողների համար:

28. Ղազարոս Աղայանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Է. Երիցյան:

29. Ճանապարհորդը ավարտեց իր երթուղին: (Մեծ հոկտեմբերի 50-ամյակին նվիրված ալբոմ - ճանապարհորդի երթուղին դպրոցական գրադարաններում) /Կազմ.՝ Բ. Մելյան:

30. Մանկական գրադարանի կապը ծնողների և դպրոցի հետ: Մեթոդա-հրահանգչական նամակ:

31. Մանկական գրադարանների աշխատանքի փորձից /Խմբ.՝ Ա. Ամիրյան:

32. Մելյան Բալաբեկ: Գյուղական գրադարանը և մանուկ ընթերցողը: (Գրադարանավարների աշխատանքի փորձից):

33. Մկրտիչ Կորյուն: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Է. Երիցյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

34. Պատվական Խաչատրյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան; Խմբ.՝ Վ. Վարդանյան:

35. Պարբերական մամուլի պրոպագանդան մանկական գրադարանում /Կազմ.՝ Ա.Ամիրյան:

36. Ռուբեն Ղարիբյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

37. Սողոմոն Գրիգորի Մկրտչյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

38. Սուրեն Մուրադյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

39. Վազգեն Գրիգորի Տալյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

40. Վախտանգ Անանյանը մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Է. Երիցյան:

41. Վիկտոր Վարդանի Վարդանյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ամիրյան; Խմբ.՝ Ս. Մկրտչյան:

1969

42. Աթաբեկ Խնկոյան (Խնկո-Ապեր): Կենսագրություն և մատենագիտություն /Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

43. Գուրգեն Բորյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Հակոբյան; Խմբ.՝ Ս. Լալախանյան:

44. Երկրագիտական աշխատանքի կազմակերպումը մանկական գրադարանում (Մեթոդա-հրահանգչական նամակ) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

45. Էդուարդ Ավագյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր և միջին տարիքի դպրոցականների համար:

46. Թումանյանական օրերը մանկական գրադարանում: (Օգնություն մանուկներին սպասարկող գրադարանավարներին) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

47. Ինչ կարդալ մանուկներին: Գրականության անոտագրված հանձնարարական ցանկ նախադպրոցական հասակի և I-IV դասարանների երեխաների համար: Պրակ 2. 1950-1967 /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

48. Ինչպես անցկացնել լենինյան ընթերցումները մանկական գրադարաններում: (Ծննդյան 100-ամյակի առթիվ):

49. Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1968 թթ.) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան:

50. Հայկական ՍՍՀ մանկական գրադարանների 1968 թ. հաշվետվությունների տեսություն:

51. Հենրիկ Սևան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ: Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս. Մ. Խարազյան:

52. Մատենագիտությունը ծառայում է մանուկ ընթերցողներին: (Լենինականի քաղաքային մանկական գրադարանների աշխատանքի փորձից) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

53. Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ միջին և բարձր տարիքի սովորողների համար (Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ):

54. Վիկտոր Վարդանի Վարդանյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ (Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների համար) /Կազմ.՝ Ա. Ամիրյան:

1970

55. Արշավիր Դարբնի: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ց. Սիմոնյան; Խմբ. Ա. Հակոբյան:

56. Բանաստեղծությունների ցանկ նվիրված Սովետական Հայաստանին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 4-8-րդ դասարանների համար: (50-ամյակի առթիվ) /Կազմ.՝ Մ. Մուրադյան:

57. Եղբայրական հանարապետությունների գրողները մանուկներին: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան:

58. Խաչիկ Հրաչյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Բ. Գ. Մելյան:

59. Խնկոյանական օրերը մանկական գրադարաններում /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

60. Հանձնարարական գրականության թեմատիկ ցանկ 2-6-րդ դասարաններում սովորողների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան:

61. Հովհաննես Ղուկասյան: Գրականության ծանոթագրվարծ հանձնարարական ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

62. Հովհաննես Շիրազ: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Շ. Ա. Արմենյան:

63. Մաթևոս Դարբինյան (Կենսամատենագիտություն) /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս.Բ. Աղաբաբյան:

64. Մանուկ ընթերցողների ուսումնասիրության և նրանց ընթերցանության ղեկավարումը: (Մեթոդական ձեռնարկ գրադարանավարների համար) /Կազ.՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբագիր՝ Հ. Սիլվանյան:

65. Սիլվա Կապուտիկյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար /Կազմ.՝ Ս. Լալախանյան; Խմբ.՝ Ա. Հակոբյան:

66. Սովետական Հայաստան - երկիր հարազատ: (Հանձնարարական գրականության ցանկ 7-8-րդ դասարանների համար) /Կազմ.՝ Ց. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

67. Ստեփան Զորյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հոբոս-Ապեր:

68. Վ. Ի. Լենինի մասին գրականության պրոպագանդան կրտսեր տարիքի (1-4 դաս.) աբոնեմենտում /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան:

1971

69. Աթաբեկ Խնկոյան: Ծննդյան հարյուրամյակի առթիվ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու: (Օգնություն մանկական գրադարանի աշխատողներին) /Խմբ.՝ Վ. Ա. Խնկոյան:

70. Արազյան Թերեզա: Արամ Սաթունց: Հանձնարարական աշխատանք ընթերցողների գեղագիտական դաստիարակության ղեկավարողներին:

71. Գրողները մանուկներին: (Գրականության հանձնարարական ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար /Խմբ.՝ Հ. Դանիելյան:

72. Լուսիկ Բառնակյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Ա. Ս. Ամիրյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

73. Հոբոս-Ապեր: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան; Խմբ.՝ Բ. Գ. Մելյան:

74. Մնացական Թարյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ նախադպրոցական, կրտսեր և միջին տարիքի համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ա. Ս. Մաթևոսյան:

75. Նանսեն Միքայելյան: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

76. Սարմեն: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ կրտսեր, միջին և բարձր տարիքի դպրոցականների համար /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

77. ՍՄԿԿ 24-րդ համագումարի նյութերի պրոպագանդումը մանկական և դպրոցական գրադարաններում (Մեթոդական նամակ մանուկների ընթերցանությունը ղեկավարողներին):

1972

78. Անահիտ Սեկոյան: Հանձնարարված գրականության ծանոթագրության ցանկ 7-9-րդ դասարանների ընթերցողների համար /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

79. Արազյան Թ. Մ. Սոֆյա Սամվելյան: Հանձնարարական աշխատանք ընթերցողների գեղագիտության դաստիարակությունը ղեկավարողներին) /Խմբ.՝ Ց. Լ. Սիմոնյան:

80. Գեղագիտական աշխատանքը մանկական գրադարանում: (Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի աշխատանքի փորձից) /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Է. Ս. Ավագյան:

81. Գրողները մանուկներին: (Գրական հանձնարարական ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանի աշակերտների համար) /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան; Խմբ.՝ Ե. Հ. Գրիգորյան:

82. Հայ մանկական գրականության մատենագիտություն.

Պրակ 1. 1920-1945 թթ.- Երևան, 1972: Վերահրատ.՝ Երևան, 1988:

Պրակ 2. Սովետական շրջանի հրատարակություններ (1946-1972) /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան, Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան.- Երևան, 1974:

Պրակ 3. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական հրատարակություններ /Կազմ.՝ Բ. Գ. Զաքարյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան.- Երևան, 1975:

Պրակ 4. Սովետական շրջանի հրատարակություններ (1973-1982 թթ.) /Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.- Երևան, 1984:

Պրակ 5. Մանկական թարգմանական գրականություն: Սովետական շրջանի հրատարակություններ (1973-1982 թթ.) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ. Հ. Դ. Դանիելյան.- Երևան, 1987:

Պրակ 6. 1983-1987 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2007:

Պրակ 7. 1988-1992 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2013:

Պրակ 8. 1993-1997 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2015:

Պրակ 9. 1998-2002 /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ. Ե. Հակոբյան.- Երևան, 2018:

83. Հեքիաթների աշխարհում: Գրականության հանձնարարականների ցանկ 1-3-րդ դասարանների ընթերցողների համար /Կազմ.՝ Ս. Զ. Ավետիսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

84. Ղազարոս Աղայան (1840-1911): Մատենագիտություն /Կազմ.՝ Փ. Հ. Խանզադյան, Գ. Ա. Ադյան; Խմբ. և առաջաբ.՝ Ա. Պ. Հակոբջանյան:

85. Ճանապարհորդություն գեղեցիկի աշխարհում: Հանձնարարական գրականության ցանկ 7-8-րդ դասարանների աշակերտների համար: Պրակ 1-4 /Կազմ.՝ Ց. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան.

86. Մանկական գրադարան: Գործնական մեթոդական ձեռնարկ մանուկների ընթրցանությունը ղեկավարների համար /Կազմող՝ Ն. Բ. Մեդվեդևա և ուրիշն.; Ռուս. թարգմ.՝ Հր. Կոստիկյան; Խմբ.՝ Հ. Հ. Դանիելյան:

87. Մանկական գրադարանը ՍՍՀՄ-ի 50-ամյակին /Կազմ.՝ Ց. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1973

88. Արեգ Լուսինյանը մանուկներին: Օգնություն գրադարաններում՝ երեխաների հետ տարվող գեղագիտական աշխատանքը ղեկավարողներին /Կազմ.՝ Թ. Մ. Արազյան:

89. Գեղունի Չթչյանը մանուկներին: Օգնություն գրադարաններում երեխաների հետ տարվող գեղագիտական աշխատանքը ղեկավարողներին /Խմբ.՝ Ք. Գ. Գրիգորյան:

90. Գրողները մանուկներին: Գրականության հանձնարարված ցանկ նախադպրոցական տարիքի և 1-3-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Լ. Ս. Դանիելյան:

91. Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1963-1973 թթ.):

92. Մանկական գրադարանների աշխատանքի հիմնական ցուցանիշները 1972 թ. /Կազմ.՝ Ց. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

93. Մկրտիչ Կորյուն /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Հ. Կ. Կոստիկյան:

1974

94. Հայրապետ Հայրապետյան (1874-1962): Մատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան, Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան:

95. Քո դասագրքից այն կողմ: Ֆիզիկայի, քիմիայի և մաթեմատիկայի հանձնարարված գրականության ծանոթագրության ցանկ 6-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1975

96. Անուշավան Գասպարյանը մանուկներին /Կազմ.՝ Ց. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

97. Դանիելյան Հայկուշ: Համագումարի ուղիով: Մանուկներին սպասարկող գրադարանների աշխատանքի փորձից /Խմբ.՝ Հ.Դ. Դանիելյան:

98. Ընթերցողի ուսումնասիրումը և դաստիարակությունը մանկական գրադարանում: Մեթոդական ցուցումներ /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

99. Հայրենագիտական աշխատանքը Լենինականի մանկական գրադարաններում: Մեթոդական հանձնարարականներ երեխաների ընթերցանության ղեկավարներին /Կազմ.՝ Գ. Ա. Աղյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

100. Միշտ պատրաստ: Մեթոդա-հրահանգչական նամակ մանուկների ընթերցանությունը ղեկավարողների համար /Կազմ.՝ Ա. Գ. Թադևոսյան:

101. Վախթանգ Անանյանը և մանկական գրադարանը: Մեթոդական օգնություն մանուկների ընթերցանությունը ղեկավարողներին /Կազմ.՝ Բ. Գ. Մելյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1976

102. Ապագան լուսավոր է և գեղեցիկ /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

103. Եղիր առողջ և առույգ: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 5-8 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

104. Հռիփսիմե Պողոսյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Խ. Մ. Գյուլնազարյան:

105. Ճանաչիր բուսական և կենդանական աշխարհը: Հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 4-8 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

106. Նոր գրքեր: Հանձնարարված գրականության թեմատիկ ցանկ 4-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1977

107. Արաքս: Մատենագիտություն /Կազմ.՝ Ե. Կ. Երեմյան; Խմբ.՝ Գ. Գ. Աղախանյան:

108. Գրադարանային դասակարգման աղյուսակներ մանկական գրադարանների համար /Թարգմ.՝ Հ. Հ. Սիլվանյան:

1978

109. Խաժակ Գյուլնազարյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Լ. Կարապետյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

110. «Պիոներ» ամսագրի մատենագիտություն /Կազմ.՝ Է. Ս. Երիցյան, Ռ. Հ. Մուշեղյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան, Բ. Գ. Ձաքարյան:

Պրակ 1. 1923-1955.- 1978:

Պրակ 2. 1956-1965.- 1984:.

Պրակ 3. 1966-1980.- 1988:

111. Ցուցադրական աշխատանքը մանկական գրադարաններում (Մեթոդական հանձնարարականներ) /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1979

112. Ամեն լավագույնը երեխաներին: Մեթոդական հանձնարարական՝ նվիրված մանկան միջազգային տարվան /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

113. Գրադարանային մատենագիտական դասակարգում: Աղյուսակներ մանկական գրադարանների համար /Թարգմ. և փոխադր.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ռ. Ա. Իշխանյան:

114. Կարգային գրացուցակների ձևավորումը մանկական գրադարանների ԳՄԴ աղյուսակների համաձայն (Մեթոդական-հրահանգչական նամակ) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

115. Հակոբ Աղաբաբ: Մատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ա. Ադյան; Խմբ.՝ Գ. Հ. Սրվանձտյան:

116. Մանկական գրադարանների ֆոնդերի և գրացուցակների փոխադրումը ԳՄԴ աղյուսակների: Մեթոդա-հրահանգչական նամակ /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան:

1980

117. Աշոտ Շայբոն: Հանձնարված գրականության ծանոթագրված ցանկ 5-8-րդ դասարանների համար /Կազմ.՝ Ա. Ս. Աբովյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

118. Սուրեն Մուրադյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1981

119. Կամսար Ավետիսյան: Գրականության հանձնարարական ցանկ /Կազմ.՝ Մ. Հ. Մուրադյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

120. Մատենագիտություն «Հասկեր» ամսագրի (1905-1917, 1922) /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

121. Պատանին գանգրահեր: Մեթոդական հանձնարարականներ երեխաների ընթերցանությունը ղեկավարողների համար /Կազմ.՝ Գ. Լ. Ավետիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

122. Վիկտոր Վարդանյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1982

123. Գրողները մանուկներին: Հանձնարարված գրականության ծանոթագրված ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

124. Գրքեր հարազատ և մտերիմ: Մեթոդական հանձնարարական մանկական գրքի շաբաթի առթիվ /Կազմ.՝ Շ. Ս. Նալբանդյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

125. Դարաշրջանի միտքը, պատիվն ու խիղճը: Մեթոդական հանձնարություններ /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

126. Երբ միասին են բաբախում սրտերը: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

127. Մանկական գրականության հետ տարվող աշխատանքները ԳԿՀ-ում: Մեթոդական հանձնարարական մանուկներին սպասարկող գրադարանների համար /Կազմ.՝ Գ. Կ. Միրիբյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

128. Վալտեր Արամյան: Գրականության ծանոթագրված հանձնարարական ցանկ 6-8-րդ դասարանների համար /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1983

129. Ասք բոլշևիկյան ընդհատակի մասին: Մեթոդական հանձնարարական՝ ՌՍԴԲԿ երկրորդ համագումարի 80-ամյակը /Կազմ.՝ Գ. Լ. Ավետիսյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

130. Գիտելիքների աշխարհում: Գիտահանրամատչելի գրականության ծանոթագրված ցանկ 6-8-րդ դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Փ. Հ. Մեժլումյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

131. Մանկական գրքի առաջին օջախը (Ուղեցույց) /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

132. Սովետական իրավունքը և ընթերցողը (Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Գ. Կ. Խաչատրյան:

133. Տպագիր երկերի նկարագրության միասնական կանոններ (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Ֆ. Խաչատրյան:

1984

134. Գեղեցիկ և առողջ լինելու գաղտնիքը (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

135. Գիտահանրամատչելի գրականության դերը երեխայի կյանքում (Մեթոդական օգնություն գրադարանավարներին) /Կազմ.՝ Մ. Խ. Կոշկակարյան; Խմբ.՝ Ռ. Իշխանյան:

136. Գրացուցակների կազմակերպումը և պրոպագանդան գրադարանում (Մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ի. Ա. Ավետիսյան; Խմբ.՝ Բ. Գ. Զաքարյան:

137. Մանուկների հյուրընկալ տունը: Ուղեցույց:

138. Նորը գաղափարախոսական աշխատանքում: Մեթոդական հանձնարարական /Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

139. Վազգեն Տալյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ա. Ադյան; Խմբ.՝ Ս. Ս. Բաբայան:

1985

140. Գարնան շողեր /Կազմ.՝ Ա. Պետրոսյան; Առաջաբ., խմբ.՝ Ա. Պողոսյան:

141. Գիտության տոնը: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Ա. Նարիմյան; Խմբ.՝ Էդ. Ավագյան:

142. Գրադարանային ակտիվ և խորհուրդ: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Հ. Բ. Հարությունյան; Խմբ.՝ Մ. Ս. Հովսեփյան:

143. Ի՞նչը, որտե՞ղ, ե՞րբ... Արկածային և գիտաֆանտաստիկ գրականության ծանոթագրությունների ցանկ միջին և բարձր տարիքի ընթերցողների համար /Կազմ.՝ Գ. Հ. Դումանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

144. Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանի հրատարակությունների ցանկ (1973-1983 թթ.) /Կազմ.՝ Հ. Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Է. Ս. Երիցյան:

145. Սխրանքդ անմահ է /Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

146. Սողոմոն Մկրտչյան /Կազմ.՝ Գ. Ս. Մկրտչյան; Խմբ.՝ Ս. Ս. Մուրադյան:

1986

147. Աշխատանքային դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը գրադարանում: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Շ. Ս. Նալբանդյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

148. Ընդդեմ խավարի: Հակակրոնական հանձնարարական գրականության ծանոթագրված ցանկ 6-9 դասարանների աշակերտների համար /Կազմ.՝ Գ. Հ. Դումանյան; Խմբ.՝ Վ. Գ. Տալյան:

1987

149. Այբբենական-առարկայական ուղեցույց (Մակետ) /Կազմ.՝ Ի. Ս. Ավետիսյան; Խմբ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան:

150. Աշոտ Տեր-Գրիգորյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան, Ռ. Ա. Տեր-Գրիգորեան:

151. Բարոյագիտության այբուբենը երեխաներին: Մեթոդական հանձնարարականներ /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

152. Երեխաներին սպասարկող գրադարանների հիմնական ցուցանիշները: (1981-1985 թթ. վերլուծություն) /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

153. Համագումարի կենսահաստատ ուղիով: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Մ. Ս. Հովսեփյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

154. Հենրիկ Սևան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Ս. Մկրտչյան; Խմբ.՝ Էդ. Ս. Ավագյան:

155. Հոկտեմբերին հավատարիմ: Մեթոդական հանձնարական /Կազմ.՝ Ա. Ս. Նարիմանյան, Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

156. Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի /Կազմ՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիլյան:

157. Սոֆյա Լալախանյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Հ. Գ. Ավանեսյան; Խմբ.՝ Ս. Ս. Մուրադյան:

1989

158. Լիպարիտ Սարգսյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ս. Գ. Լալախանյան:

1990

159. Հայ պոեզիան և գեղագիտական դաստիարակությունը /Կազմ.՝ Ա. Աբովյան; Խմբ.՝ Ս. Մուրադյան:

160. Մատենագիտություն «Աղբյուր» ամսագրի (1901-1918) /Կազմ.՝ Ֆ. Ս. Խաչատրյան; Խմբ.՝ Հ. Դ. Դանիելյան:

1991

161. Ճանապարհորդություն գեղեցիկի աշխարհում: Հանձնարարելի գրականության ծանոթագրված ցանկ /Կազմ.՝ Ց. Լ. Սիմոնյան; Խմբ.՝ Վ. Գ. Բարսեղյան:

1992

162. Գրացուցակների կազմակերպումն ու պրոպագանդումը /Կազմ.՝ Ի. Ավետիսյան:

163. Գոյապահպանություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան:

164. Հայոց հին և միջնադարյան մեծերի մասին /Կազմ.՝ Շ. Նալբանդյան:

1998

165. Գրադարանը բարեփոխվող դպրոցում: Գիտագործնական համաժողովի նյութեր (Նոյեմբեր 1997) /Խմբ.՝ Վ. Պողոսյան:

166. Թարգմանչաց օր /Կազմ.՝ Շ. Նալբանդյան:

2001

167. Գթասրտության և միասնության շաբաթ /Կազմ.՝ Ե. Երեմյան:

168. Հովիկ Էդգարյանի հետ: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Շ. Ոսկանյան:

169. Ֆրիտյոֆ Նանսեն /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

2002

170. Գարնան շողեր: Մանկական ստեղծագործություններ /Կազմ.՝ Ռ. Տոնոյան, Մ. Հովսեփյան; Խմբ.՝ Ե. Պետրոսյան:

171. Գուրգեն Գաբրիելյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

172. Շուշանիկ: Ագռավի արցունքը: Բանաստեղծություններ /Շուշանիկ (Շ. Ս. Ոսկանյան); Խմբ.՝ Ֆ. Բախչինյան:

173. Շուշիի ազատագրման 10-ամյակը /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

174. IEARN in Armenia /Compl., edit. K. Durgaryan.

2003

175. Էդուարդ Ավագյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

176. Մենք և բնությունը: Հանձնարարական գրականության ցանկ /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

177. DEEP/iEARN in Armenia: Քաղաքացիական դաստիարակություն (միջազգային կրթություն) /Կազմ.՝ Կ. Դուրգարյան, Մ. Հովսեփյան, Շ. Ոսկանյան:

178. iEARN IN ARMEENIA: Միջազգային կրթությունը և ցանցային ռեսուրսները: [Դպրոցականների թեմատիկ շարադրությունները՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով]:

2004

179. Գեղունի Չթչյան: Մատենագիտություն /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

180. Երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում (Մեթոդական օգնություն գրադարանավարին) /Կազմ.՝ Մ. Հովսեփյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

181. Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հրատարակությունները (1983-2003 թթ.) /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

182. Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն: Մեթոդա-մատենագիտական հանձնարարական /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

183. IEARN in Armenia /Comp. K. Durgaryan, E. Simonyan, P. Mezhlumyan; Edt. K. Durgaryan.

2005

184. Գրադարան և գրադարանավարներ: (Մեթոդական ձեռնարկ) /Խմբ.՝ Ե. Հակոբյան; Կազմ.՝ Մ. Կոշկակարյան:

185. «Ծիծեռնակ» ամսագրի մատենագիտություն (1967-2002) /Կազմ.՝ Ե. Երեմյան, Գ. Մկրտչյան, Հ. Քեռյան:

186. Հնդկաստան: Մեթոդական հանձնարարական /Կազմ.՝ Հ. Քեռյան:

187. Մաշտոցյան գրեր: Մեթոդ-մատենագիտական հանձնարարական /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

188. Սուրեն Մուրադյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

2006

189. Անկախության 15 /Խմբ.՝ Գ. Կարապետյան:

190. Արեգ Լուսինյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան, Լ. Մուսիկյան:

191. Գրադարան և գրադարանավարներ: Մեթոդական ձեռնարկ: Երկրորդ լրացված հրատ. /Խմբ.՝ Ե. Հակոբյան; Կազմ.՝ Մ. Կոշկակարյան:

192. Իրանի Իսլամական հանրապետություն: (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Հ. Քեռյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

193. Կրթադաստիարակչական աշխատանքները Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում /Կազմ.՝ Մ. Հովսեփյան, Խմբ.՝ Ե. Հակոբյան:

194. Ռուսաստանի Դաշնություն (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Լ. Մուսիկյան; Թարգմ. և խմբ.՝ Գ. Կարապետյան:

2007

195. Հայոց բանակ (Տեղեկատու-մեթոդական հանձնարարական) /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

196. Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանը մանկական ու դպրոցական գրադարանների հանգուցակետում /Կազմ.՝ Շ. Ոսկանյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

197. Մելյան Բալաբեկ: Դեպի լույս: (1963-1973 թթ. Խնկո-Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանում աշխատածս տարիների մասին հուշերից պատառիկներ):

198. Использование электронных источников информации в детской библиотеке (Информационно-методическое пособие) /Сост.: Э. Симонян.

2008

199. Գրադարանի մասին հրատարակված նյութերի մատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

200. Կարապետյան Գայանե: Մանկապատանեկան ընթերցանության հիմնախնդիրները (Մեթոդական հանձնարարական):

201. Յուրի Սահակյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Գ. Մկրտչյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

202. Ոսկանյան Շուշանիկ: Համալրման արդի խնդիրներ (Գրադարանային ձեռնարկ):

2009

203. Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուների օգտագործումը: Տեղեկատու-մեթոդական ձեռնարկ /Կազմ.՝ Է. Սիմոնյան; Թարգմ. և խմբ.՝ Գ. Կարապետյան:

204. Կոշկակարյան Մանիկ: Ապրենք հավատով և հայրենասիրությամբ:

205. Սարդարապատի ղողանջները: Երեխաների նկարչական ստեղծագործությունների գիրք-ալբոմ /Խմբ.՝ Գ. Կարապետյան:

2010

206. Արեգ Լուսինյան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

207. Հենրիկ Սևան: Կենսամատենագիտություն /Կազմ.՝ Ե. Երեմյան; Խմբ.՝ Ե. Հակոբյան:

208. Ներսիսյան Լևոն: Ultra Verba=Վերջին խոսք:

2012

209. Իմ ստեղծած գիրքը: [Շարադրություններ նկարազարդումներով]:

210. Հայտնի և անհայտ գրադարաններ, անվանի գրադարանավարներ /Կազմ.՝ Գ. Կարապետյան; Խմբ.՝ Ն. Հայրապետյան:

211. Ներսիսյան Լևոն: Ինչից եւ ումից սկսենք. անտիկ շրջան: Դասախոսություններ:

2015

212. 7 գույն: 7 նկարազարդ պատմվածք պատանիների համար /Ա. Սերոբյան, Կ. Աշուղյան, Լ. Հակոբյան, Է. Զոհրաբյան, Հ. Թեքգյոզյան, Ե. Գրիգորյան, Մ. Բեյլերյան:

213. Թայզեն Մանֆրեդ: Ապակյա Արամը /Գերմ. թարգմ.՝ Կ. Մատինյան:

2017

214. Մանկապատանեկան ընթերցանության կազմակերպումը: Մեթոդական ձեռնարկ /Թարգմ.՝ Ն. Ղարիբյան, Ա. Շահբազյան, Ն. Աճեմյան:

2018

215. Փաշինյան Նիկոլ: Չար տնակի հեքիաթը:

2021

216. Սքանչելին: Հեքիաթ /Հ. Մխիթարյան; Ձնե մարդը /Էդ. Թաթիկյան; Խմբ.՝ Գ. Կարապետյան: